ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 245 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 201-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխ-վարչապետի 2024 թվականի մարտի 25-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Համայնքների զարգացում» N 201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00000911) 2025 թվականի ապրիլի 4-ին կնքված՝ N ՄԲ23/Գ-25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի ապրիլի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 7-ն ընկած ժամանակահատվածում Երևանի մետրոպոլիտենի վագոններում և կայարաններում գովազդի համար նախատեսված մակերեսներին գովազդային պաստառների թույլտվության տրամադրման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,017,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2025 թվականի մարտի 31-ին կնքված՝ N 25/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պաստառների տպագրության, տեղադրման և ցուցադրման աշխատանքների իրականացում՝ 2,673,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բի Բի Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01243626) 2025 թվականի ապրիլի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի ապրիլի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 9-ն ընկած ժամանակահատվածում գովազդային տեսահոլովակի տեղադրման և հեռարձակման ծառայությունների մատուցում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ